

ԱՐԴԻ ՀԱՅ ՄԱՍՈՒԼԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՄԻ ԶԱՆԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ժամանակակից հայ լրագրությունն ինքնատիպ ու հետաքրքիր է ոչ միայն իր բառօգտագործման, բառընտրության գործընթացով, այլև այն կարևոր հանգամանքով, թե ինչ է ակնկալում ընթերցողը մամուլից իմացության ա՞ծ, կարծիքի ձևավորու՞մ, թե վարքի փոփոխություն: Ուշադիր ընթերցողն իր դիրքորոշումը կունենա տարբեր պարբերականների վարկանիշի նկատմամբ. «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթը, «Գրական թերթն» աչքի են ընկնում իրենց զուսպ մեկնաբանություններով, լեզվի մաքրության հանդեպ հոգատարությամբ: «Առավոտ», «Ազգ», «Հայկական ժամանակ» թերթերն ավելի ազատ ու անկաշկանդ են բառագործածության, կարծիքների հայտնելու պարագայում: «Իրավունքն» իր դիտողությունների ու գնահատականների մեջ տարօրինակ կերպով համարձակ է ու անկանխատեսելի: Դա կախված է այն կարևոր հանգամանքից, թե որ կուսակցությանն է պատկանում այս կամ այն թերթը և ինչ առաքելություն ունի:

Անհատական-հեղինակային դիպվածային բառերը, օտարաբանությունները, հասարակաբանությունները, ժարգոնային բառերը, հնաբանությունները և այլն, որոնք այնքան առատ են արդի մամուլի էջերում, ռժավորում են լրագրային խոսքը և տվյալ խոսքաշարում համարվում դիպուկ և անփոխարինելի:

Ժամանակակից մամուլում հաճախ են հանդիպում անհատական-հեղինակային կամ օկագիտնալ (դիպվածային) նորակազմություններ (բառ կամ դարձված): Դրանք այն բառերն են, որ ստեղծվում են ակամա, որևէ առիթով: Շատ անհատական նորակազմություններ կարող են համընդհանուր գործածություն ստանալ, ձեռք բերել լեզվի կայուն միավորների կարգավիճակ, բազմիցս կրկնվելու դեպքում վերածվում են համալեզվական բառերի և ամրագրվում լեզվի մեջ, ինչպես՝ *բարձրածայնել*, *նորընտիր*, *գնաձ*, *ընդդիմադիր*, *չափորոշիչ*, *ճեպագրույց* և այլն:

Երբեմն էլ հանդիպում են այնպիսի նորակազմություններ, որոնք դրական իմաստակիր միավորներ են, սակայն դեռ տարածում չունեն հասարակության մեջ:

«Նոյեմբերի 15-ին, Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում, հանդիսապետությամբ Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի տեղի ունեցավ շքանշանների հանձնման հանդիսավոր արարողություն»: (ՀՀ, 207, 2004):

«Այսօր ... ինչպես նաև պաշտոնատար այլ անձինք և մի խումբ առանձնացնողի» լրագրողներ կժամանեն Բեռլինի «Թիֆզըլ» օդանավակայան, տեղեկացնում են «Ազգին» Գերմանիայից»։ (Ազգ, 205, 2004)

Շատ հաջող և տեղին կազմված հոգեորություն բառը ծնունդ առավ Եհովայի վկաների «աշխուժացման» հետ և այսօր էլ ցանկացած մամուլի էջերում կհանդիպենք դրան։

«Սակայն, այ քեզ բան, սույն կրոնական ամենկին էլ ոչ հայանաաստ հաստատությունը, վերջերս չբավարարվելով հայերի հոգեորությամբ, արդեն անցել է պարսիկներին «դարձի բերելու»՝ սույն գործն իրականացնելով հիմնականում Մեդրիի տարածքում» (Իրավունք, 60, 2004)։

Երբեմն նշելով որևէ անհատական-հեղինակային բառ՝ քննադատվում է ինչ-որ երևույթ։

«Նաև հասկանալի է, թե ինչու տեղի ունեցավ այդպիսի սայթաքում, քանի որ սփյուռքահայ թերթերում բավական հաճախ կարելի է հանդիպել «Մեծ եղեռնի սգալոն» զարմանալի արտահայտությանը» (Իրավունք, 91, 2004)։

Լրագրերի էջերում հանդիպում են այնպիսի դիպվածային բառեր, որոնք մեկուսացած նորաբանություններ են, ստեղծվում են հիմնականում ոչ թե լեզվի բառապաշարը հարստացնելու, այլ ոճական ինչ-ինչ նկատառումով։ Այդ բառերն ու դարձվածներն արտացոլում են լրագրողի լեզուն ու ոճը, նրա մտածելակերպն ու դիրքորոշումը։ Նման պարագայում դրանք մեջբերվում են բառացի, երբեմն էլ չակերտների մեջ են առնվում անհատական-հեղինակային բնույթն ընդգծելու համար։

«Ամերիկան «բառեազալի» (Առավոտ, 213, 2004)։

«Կարճ ասած, արագ տեմպերով «եվրոպականանում ենք» (Իրավունք, 40, 05)։

«Իշխանությունները տիտելազավով են տառապում, ժողովուրդը ... մի կտոր հաց գտնելու, ծայրը ծայրին հասցնելու, գոյատևելու տենդով ... Ընդհանրական մի երևույթ էլ կա՝ ռոմանտենը»։ (ԳԹ, 10, 2005)

«Այսօրվա մի հրապարակման փոքր-ինչ հուժկաշունչ ու հանգավոր վերնագիրը դոնաժեժ է բերելու հայոց վերին տալանավորների ... որերորդ անգամ վերջապես հնչեցնելու պահանջով» (Իրավունք, 22, 2005)։

«Մի պահ վեր կաց չղջակա տիտաժեժ ծայնեղից» (նույն տեղում)։

Այս կարգի օկագիտնալ բառերն ընդհանրանալու ակտիվ միտում չունեն, հաճախ գործածության մեկ դեպքով էլ սահմանափակվում է դրանց կյանքը։

«Ըստ միջազգային դիտորդների, Զայաստանում շատ փշալարված մթնոլորտ է» (Իրավունք, 34, 05)։

Դիպվածային բառերը երբեմն կազմվում են ոչ գործուն կաղապարով և խոսողի կամ գրողի կողմից գործածվում սոսկ «մեկ անգամ» տվյալ ասության: Դիպվածային բառերի իմաստավորումը հնարավոր է միայն խոսքաշարի հիման վրա:

Հաճախ մասնուլում մեծան բառեր են կազմվում անալոգիայի (մեծանողության) եղանակով բառախաղ ստեղծելու նպատակով՝ *իշխանափոխություն-աթոռափոխություն* (Առավուտ, 99, 05), *աթոռագողություն* (Իրավունք, 52, 05), *կողակից-գողակից* (Իրավունք, 40, 05), *աշխատավարձ-աղքատավարձ* (Իրավունք, 41, 05), *լեզվակռիվ-բռնցքակռիվ*, հեզանքով՝ *հոգեորս-հոգեորսորդ* (Իրավունք, 41, 05), *գրախոսություն-գրախոսություն* (ԳԹ, 13, 05), *լեզվամարտ* (ՀԺ, 149, 05), *ծեռնոցամարտ*, *եկամուտ-եկամութ* (Ազգ, 146, 05):

«Ահա, մեր օրերում, փափագաշատ անկախության ժամանակներում աշխարհում փառաբանված հայոց ուսուցչական արժանապատվությունը մեկից խաթարվեց մաողագտիչ-մաողագրկիչ օպտիմալացման հրահանգով» (Իրավունք, 22, 05):

Ա.Էլոյանն առանձնացնելով անհատական-նորաբանությունների 3 խումբ (պոտենցիալ բառեր, դիպվածական, հեղինակային)՝ իրավամբ նշում է, որ «յուրաքանչյուր նոր բառ, իմաստ, կայուն կապակցություն, դարձվածք և այլն, սկզբնապես հանդես է գալիս իբրև նորաբանություն և պատկանում է լեզվի պահվ գործածություն ունեցող բառերի շերտին: ... Յուրաքանչյուր լեզվական նորաբանություն ինքնին ստեղծվում է որևէ անհատի կողմից»:

Լ.Եզեկյանի հանգամանալից քննության արդյունքում առավել նպատակահարմար է դիտվում նշված «պոտենցիալ բառերը»՝ որպես անհատական նորաբանություններ, իրենց իմաստային, ոճական հատկանիշներով համարել մույն դիպվածական բառերը՝ կիրառական տարբեր հաճախականությամբ և անվանել *համատեքստային* կամ *խոսքաշարային* նորակազմություններ:

Դիպվածական բառերի առանչնահարկություններից մեկն այն է, որ արտահայտչական գործառնության առավել ուժեղ է, քան անվանողականը:

Լրագրերի էջերում հանդիպում են մեծ անհատական-հեղինակային *կապակցություններ*, ինչպես՝ *դժվարամարս ականջներ*, *թշվառակերպ կյանք*, *առակախոս գրիչ*, *քարաշատ լռություն*, *կյանքակարոտ վճիռ*, *փափկաշատ բազկաթոռ* (Իրավունք), *ազատատենչ քամի*, *տափակ բառակույտ* (Առավուտ), *գլխակեր տանիք* (ՀԺ), *անհիքնասեր այլասերություն*, *վիթխարի օր*, *պարկեշտ կարծիք*, *էժան կրկնություն*, *պառավական մակարդակ*, *հպանցիկ կազմակերպվածք*, *մողայիկ քամի*, *մեռելածին գիրք*, *ճնճղուկային արժեք*, *ռնգեղջյուրային ախորժակ*, *կապարծակ ամենակարող*, *բազմականջ-բազմաչք թերթեր*, *թունավոր կռիվ*, *մզլոտ գրական առաջնորդ*, *հաստամիտ քաշառ*, *պառաված*

ներշնչանք, անկենդան բառաբարդում, գեղեցկակորույս պատկեր ... (ԳԹ): Անհատական-հեղինակային բառերն ու կապակցություններն առավել հատուկ են ազատ, անկաշկանդ ու ինքնատիպ մտածելակերպով հեղինակներին: «Հայաստանի Հանրապետություն» պաշտոնաթերթի 2005-ի թիվ 54-ում կարդում ենք հետևյալ հայահունչ նախադասությունները. «Ճարտարապետը շենքը զգում է գոյասպաշտորեն: ...Եթե քաղաքապետարանի արտաքույթը թափանցիկ, խուլ ու քանդակային հարթությունների հանգերգ է, ապա շենքի ներսույթը միանգամայն լուսախնդությամբ մաղվող տարածություն է:» Այս կարգի նախադասություններն ինչ-որ տեղ կարելի է համարել մաքրամոլության արդյունք:

Արդի մամուլի լեզուն պետք է ունենա արդիականության, հրատապության, հասարակական հնչեղության որակային հատկանիշներ, քանի որ իրագործում է հասարակական լայն խավերի վրա ներգործելու նպատակ: Ընթերցողների վրա դիպուկ ներգործելու նպատակով լրագրային լեզվում գործածվում են անհատական-հեղինակային նորակազմություններ, որոնք խոսքը դարձնում են բազմազան, թարմ, տպավորիչ ու ինքնատիպ:

Օտարաբանությունները մեկ այլ լեզվից անտեղի, անհարկի առնված բառերն ու արտահայտություններն են: Հաճախ լրագրողներն անհարկի կերպով լեզվի մեջ սովորական բառը, արտահայտությունը, կառուցվածքը փոխարինում են օտար բառով, արտահայտությամբ, կառուցվածքով:

«Իսկ որոշել, թե որպեղ պետք է բնակվեն պաշտոնյաները, ... սա արդեն ժողովրդավարության հերոսն ոչ մի ընդհանուր բան չունեցող մառազմ է» (Առավոտ, 29.2005):

Մառազմ բառը օգտաբանություն է ուսերենից, փոխաբերաբար նշանակում է զառամախտ, լիակադար անկարություն, քայքայվածություն, անկում: Թերթի հոդվածն էլ վերնագրված է «Նարնջագույն մառազմ»:

«Համընդհանուր մոռիհագագիա» (Առավոտ, 19.2005):

«Բջջայինը, ավտոմեքենան, այաչոր և քարտուղարուհին» (Իրավունք, 12.2005):

Մեկ այլ օրինակ. «Սակայն պարոն Մանուկյանը կարծում է, որ ռեստավ-նացիան դրանով չպետք է ավարտվի, և իր կողմից առաջարկում է, որ վերականգնվի Հանրապետության հրապարակի տոհեունան» (ՀԺ, 124.2004):

«Հայկական ժամանակ» օրաթերթի սեփական թղթակից Ա.Բ.-ի գրչին միշտ բնորոշ են նման հեզնախառն մեկնաբանությունները: Տվյալ լրատվական նյութի մեջ միտումնավոր օգտագործելով ռեստավրացիա, տոհեունա, դետալ և այլ բառեր իր հեզնական վերաբերմունքն է արտահայտում ուսամետ քաղաքականության նկատմամբ:

Օտարաբանությունները լրագրային նյութերում հեզնելու նպատակով օգտագործելը շատ տարածված միջոց է. սյուրպրիզ, շեղեր, դուբինկա, սամա-

սուղ, պորբլեմ, պրոդուկտ, պիռատ, խենդը խոխ («Առավոտ»), տրամպլին, նալոգ, ակտուալ, ռազմախ, շլագբաում, շանս, արբիտր, պրոցեդուրա, բոմբո-ներկա, դաբրո («ՀԺ»), ինտրիգ, բուստ, ռեբրանս, վենոկ, աժիոտաժ, բառադի, քիլեր և այլն («Իրավունք»):

«Հայկական ժամանակ» օրաթերթի 2005-ի թիվ 35-ում կարդում ենք «Եվս մի թռիչք» խորագրով «Ռայկոմի միստ նախագահականում» վերնագրով հոդվածը, որը հեզնում-ծաղրում է բրեժնեյան ժամանակներին հարազատ մնացած անծանց զավեշտական վարվելակերպը:

Գրում է «Իրավունք» օրաթերթը (22.05). «Ամնոռանալի է նախագահ Ռ. Քոչարյանի անմեկնելի «ըմբոստությունը», որով նա համարձակվեց հանրու-թյանը տեղեկացնել, թե Եվրախորհուրդը մեզ համար առուիտություն չէ, որի բերած հրամանները պարտադիր են կատարման»:

«Իսկ նրանք մարդկայնորեն հակակրելի ինտելեկտուալ գաճաճների իշխանություն կոչվող այդ այեառաք, իսկապես չի ընդունում ոչ մի պատվեր...» (ՀԺ, 96, 05):

Եվս մեկ օրինակ բերենք «Հայկական ժամանակ» օրաթերթից (54, 2005) առանց մեկնաբանության, և թերևս օտառաբանություններ բաժինը եզրափա-կենք այսքանով:

«Հայոց քաղաքական էլիտան շտապում էր ՌԴ նախագահ, մնագառավա-ժայեմի Վլադիմիր Վլադիմիրովիչ Պուտինի հետ հայտնվել միևնույն դահլիճում, որտեղ տեղի էր ունենալու Հայաստանում Ռուսաստանի տարվա բացումը»:

Երբեմն լրագրի էջերում հանդիպում են խոսակցական լեզվին հատուկ այնպիսի բառեր և արտահայտություններ, որոնց գործածությունը ցանկալի չէ և անպատշաճ է: Դրանք գռեհկաբանություններ են: Կան բառեր էլ, որոնք թեև գռեհկաբանություններ չեն, բայց մոտենում են դրանց, կոպտության երանգ ունեն. այդպիսի բառերը կոչվում են հասարակաբանություններ: Կարելի է ասել, որ մեր օրերի գրեթե բոլոր թերթերն էլ լի են գռեհկաբանություններով ու հասարակաբանություններով: Այդ երևույթն ունի իր պատճառները: Ստորև կփորձենք մեր բացատրությունը տալ:

Արվեստի և գիտության բոլոր բնագավառներում միշտ եղել է հեղինակի ինքնարտահայտման ծգտումը: Հաճախ լրագրողների նպատակն է զարմացնել ընթերցողին առանց հետևանքների մասին մտածելու. որևէ դեպք, դիպված, երևույթ ավելի ցցուն, ակնառու ներկայացնելու համար գործածվում են գռեհ-կաբանություններ կամ հասարակաբանություններ ուշադրություն հրավիրելու համար: Սրանք մեջբերվում կամ գրավոր խոսքի մեջ օգտագործվում են միայն բացասական հակազդեցության նկատառումով՝ ակնկալելով կամ ենթադրելով բացասական վերաբերմունք որևէ անձի, երևույթի նկատմամբ: Գռեհկաբա-

նություններ ու հասարակաբանություններ գործածվում են լրագրային նյութերի վերնագրերում.

«ՄԱԿ-ը «բլնգեց» կռալիցիային» (Առավոտ, 213, 2004):

«Ամենկին էլ չկա «թրածր լիգելու» խնդիր» (Իրավունք, 59, 2004):

Լրագրերի էջերում կարդում ենք մեծ թվով ժարգոնային բառեր, որոնք բնորոշ են հասարակության մեկուսացած խմբերի լեզվին՝ որպես ծածկաբանություններ, ինչպես ռազոռուկա, քեսարեռել, ՏէՑ-ի կռուգ, գեմյլակ, հաթաթա բարդակ, պեռեռառչիտ, օբյյակ, պիժոն, ժուլիկ, հաթոգել, յոտկել և այլն: Ժարգոնային բառերն ու արտահայտությունները լրագրային խոսքին համապատասխան երանգ են հաղորդում և ոճավորում են խոսքը. «Տուֆտա» քննարկում, «Տուֆտա» կոչ, «Տուֆտա» այց (Առավոտ, 17, 2005):

«Կռալիցիան, ունենալով իշխանության բոլոր լծակները, «մուղամուլ» փորձում է խուսափել պատասխանատվությունից» (Իրավունք, 12, 2005):

Ժարգոնային շատ բառեր գործածվում են ոչ իրենց բուն, այլ տարբեր իմաստներով, ինչպես՝ «Դպրոցների տնօրեններին «թոգիկ» (խաբեցին) (Առավոտ, 17, 2005), «Թումանյան փողոցում կայանված նրա ավտոմեքենայից թոգրել են (գողացել են) և բջջային հեռախոսը, և լուսանկարչական ապարատը, և այլ պարագաներ»:(Իրավունք, 40, 05), «...Ամեն օր իրեն զանգահարում է հանդիպելու համար, սակայն ինքը խուսափում է նրանից ու «զոռում» (զլուխն ազատում): (ն.տ.), «...Ինչից պարզ կդառնա, թե այս անգամ իշխանությունները ինչքանով կփորձեն կրկին «ձռռագնել» (խաբել) եվրոպացիներին» (Իրավունք, 52, 05):

Վերը նշված գեեհկաբանությունները, հասարակաբանությունները, ժարգոնային բառերը հանդիպում են ոչ միայն լրագրային նյութերի վերնագրերում, այլև լրագրային նյութերում լրահոսում, հարցազրույցում, ռեպորտաժում...

«Մինչև հիմա հմայված են այս հայտարարության գեղարվեստական լոռզված որակից: Անկեղծ ասած, ես մի թեթև հույս ունեի, որ զոնե այս անգամ Քոչարյանի ղամբուա կռալիցիան սթափ կլինի և մեր առաջարկներին սթափ գնահատական կտա» (ՀԺ, 19, 2005):

«Լյսիմքն կռալիցիան թրած ունի միջազգային հեղինակավոր փորձագիտական կառույցների առաջարկների վրա ևս» (Նույն տեղում):

«Այսուհանդերձ՝ հետաքրքիր է, Յասկերնիայի այս աշխատությունն ընթերցե՞լ են ՀՀ այն պաշտոնյաները, որոնք մեր ընդդիմությանը մեղադրոմ էին Ստրասբուրգում կեղտոտ լմաքս գուգադրելու մեք» (Առավոտ, 17, 2005):

«Օղը համակված է ատամների տակ փշրվող ոսկորների ճրթճրթոցով, եռանդով աշխատող ծնոտների կափկափյունով, կոկորդներն ի վար հոսող հեղուկների կլկլոցով, գոխկոցով ու գլուտոցով, և այս ամենը ողողված

«Սեխակներս ու՛մ նվիրեմ» երգի քաղցրալուր հնչյուններով...» (Գրական թերթ, 2,2005):

«Սժ պատգամավորը Դուբայում իր հետ կատարվածի մասին հարցազրույց էր տվել այդ միջադեպի առնչությամբ նրան թեքվոի հոգեբանություն ունենալու վիրավորանք հասցրած թերթերին, ինչն արդեն խոսում է պատգամավորի աշխարհընկալման մասին» (Ազգ, 19,2005):

«... Բայց յուրաքանչյուրը, ով կտեսներ, թե ինչպես է ՀՀ ԱԳ նախարարության ողջ անձնակազմը անհմաստ «unddուն» Լավրովի և նրա ուղեկցողների շուրջը» (Առավոտ, 29,05):

«Դեպի օպերայի դահլիճ տանող հերթերում կողք կողքի ծնրծմում եհն իշխանության և ընդդիմության բարձրաստիճան ներկայացուցիչները, որոնց միավորում էր միասնական նպատակը» (ՀԺ, 54,05) :

Հաճախ լրագրային նյութը գրեթե ամբողջությամբ կարող է հեղեղված լինել ժարգոնային բառերով, արտահայտություններով ու հասարակաբանություններով՝ այդպիսով ի ցույց դնելով որևէ անձի աշխարհընկալումն ու մտածելակերպը (օր. «Առավոտ» օրաթերթի 2005-ի թիվ 19-ում Դուբայի բանտում Սժ պատգամավորի արկածների մասին պատմող «Քնում էինք մետլախի վրա» հոդվածը):

Ժամանակակից մամուլում հաճախ են գործածվում շատ կոպիտ և անզուսպ գոեհիպաբանություններ, ժարգոնային բառեր ու արտահայտություններ, օրինակ՝ «Իրավունք» 93,04, «Իրավունք» 52,05 «Գրական թերթ» 2,05: Սեր մեջբերումները հնարավորինս մեղմաբնույթ են:

Հայ մամուլը որպես խոսքի ոճավորման հնար օգտագործում է նաև ժողովրդախոսակցական բառեր ու արտահայտություններ.

«...Բռնված կավատներին «հշմառ» են տալիս՝ ոչինչ, եկեք, մենք տեր ենք» (Առավոտ, 129,05):

«...Հ.Ն.-ն իրեն խանգարող բնակիչներին սկզբում փորձել է «սիշի-սիշի» անել, կանչել է բանակցությունների...» (Առավոտ, 156,05):

«Մտքը լրիվ կորցրած, ազահության ճիրանների մեջ հայտնված ուզում են, որ ամեն ինչը իրենցը լինի, իսկ ժողովրդին «ցավ ու յող» (Իրավունք, 63,05) :

Բարբառային բառեր «Առաջին հայացքից թվում է, թե «լուխ լավ է», ոչ մի խոչընդոտ չկա» (Առավոտ, 120,05):

Հնաբանությունները Լեզվի զարգացման տվյալ փուլի համար հնացած, սովորական գործածությունից դուրս եկած բառերն ու արտահայտություններն են: Հնաբանությունները քանակապես գիշում են նորաբանություններին: Արդի լրագրերի էջերում հաճախ են հանդիպում աատմանան բառեր: Սրանք

հնաքանության առանձին տեսակ են, Ա. Սուքիասյանի բնորոշմամբ՝ «հնացած այն բառերն են, որոնք հասարակության պատմական զարգացման հետևանքով համապատասխան հասկացությունների վերացման կամ ծավալի փոփոխման կապակցությամբ լեզվական ակտիվ գործածությունից դուրս են եկել»:

Լրագրողն այսօր ի՞նչ նկատառումով կարող է իր լրագրային նյութի մեջ (հոդված, հարցազրույց, թղթակցություն, ակնարկ) օգտագործել հնաքանություններ:

Հաճախ այս կամ այն անձն ու երևույթը նկարագրելու, բնութագրելու, երբեմն հեզնելու համար հարմար են գալիս հնաքանությունները: Հնաքանությունները խոսքի մեջ նոր իմաստով գործածելը ևս լրագրական նյութի վրա ուշադրություն հրավիրելու մի հմար է, հասարակության համար վտանգավոր, ոչ ցանկալի երևույթը քննադատելու համար. «Մինչ ազգիս քաղաքական մտքի տիտանները... միջազգային իրավունքի այդ բազմաժանր դաբունապետերը չափում կշռում են բանաձևի հավանական հետևանքները...» (Առավոտ, 17,2005):

Էդ. Աղայանի «Վրդի հայերենի բացատրական բառարանում» գտնում ենք բառի հետևյալ բացատրությունը. ՌԱԲՈՆԻ նույնն է ՌԱԲՈՆԻ, ՌԱԲՈՆԱՊԵՏ – (հին, գրք.) 1- Ռաբբիների պետ, գլխավոր ռաբբի: 2-փխբ. Ուսուցչապետ:

Լրագրերում բազմիցս կգտնենք ճախարար, մարգպետ, ֆեոդալ, քյոխվա, սպարապետ բառերը, որոնք հնաքանություններ են պատմաբաններ: Նախադար, մարգպետ բառերը այսօր գործածվում են վերաիմաստավորված տարբերակով.

«Նախագահ Ռ. Քոչարյանը երեկ աշխատանքային հանդիպում է ունեցել գյուղատնտեսության ճախարար Դ. Լոթյանի հետ» (ՀՀ, 7,05):

«Մեր մարգպետը (...) ասիական ֆեոդալ է» (Առավոտ, 99,05):

90-ական թթ. ճախարար բառը եկավ փոխարինելու մենեստոհն. իսկ սպարապետ բառի գործածությունը կապվում է Վազգեն Սարգսյանի գործունեության հետ. ինչպես հիշում ենք, նրան «շնորհվեց» այդ «կոչումը» ի նշան սիրո և նվիրվածության:

Շատ կարևորելով ՌԴ նախագահի այցը Հայաստան «Հայաստանի Հանրապետություն» պաշտոնաթերթը իր գրածին առավել ազդեցիկություն հաղորդելու համար օգտագործում է փաղանգ բառը.

«... ՌԴ նախագահին այս աշխատանքային այցի ընթացքում ուղեկցում էր ռուսաստանյան առաջատար լրատվամիջոցների մի ամբողջ «փաղանգ» (54,05):

Հնայած հնաքանությունները արդի ժամանակաշրջանի համար հնացած և առօրյա կենդանի գործածությունից դուրս եկած լեզվական տարրեր են, բայց ժամանակակից լեզվում ունեն ոճական յուրահատուկ կիրառություն: Իբրև

պատմաբառ մամուլում հանդիպում է վասալ (վասալություն) ռուսերեն բառը, որ փոխաբերաբար նշանակում է կամակատար:

«Ռուսաստանը, ըստ էության,... Հայաստանին վերածելու է իր վասալի» (ՀԺ, 35, 05):

«Ներկայումս երթուղային տրանսպորտի..., ինչպես ասենք նվեր են ստանում ռուքաններ, հողակտորներ, խանութներ, քոնեյկու և ծառայելու համար» (Իրավունք, 63, 05):

Լրագրերի էջերում հանդիպում են ժամանակի ընթացքում վերախմաստավորված բառեր, ինչպես՝ նոմենկլատուրա: Այս բառի բացատրությունը կարողում ենք ռուս-հայերեն բառարանում. 1- բառացուցակ, անվանացուցակ, անվանակարգություն: 2- հաշվացուցակ, բացված հաշիվների ցուցակ: Այսօր մամուլի էջերում նոմենկլատուրա բառը այլ նշանակությամբ է գործածվում.

«Ե՛հիշտ այդպես էլ կերած-խմած էր խորհրդային նոմենկլատուրան, որին ևս խստորեն հրահանգված էր համեստ կենցաղ, ապրել բացառապես աշխատավարձով, ոչ մի պարագայում անձնական նպատակներով չօգտագործել ծառայողական մեքենաներն ու հրաժարվել թանկարժեք նվերներից» (Առավոտ, 29, 05):

Ինչպես բերված օրինակն է ապացուցում, այսօր նոմենկլատուրա բառն այլ նկատառումով է կիրառվում. նշանակում է հասարակության կամ պաշտոնական որոշակի բարձր խավ:

Չհնոմենկլ բառը նույնպես հմաբանություն է և օգտագործման համար ոչ խրախուսելի, փոխառություն է ռուսերենից, նշանակում է աստիճանավոր, պետական պաշտոնյա, բյուրոկրատ: Ժամանակակից մամուլի էջերում հաճախ հանդիպող բառերից է:

«Առավել ևս, որ կոռումպացված չհնոմենկլությունը և օլիգարխները մշտապես եղել են նրա իշխանության հիմնական հենարանը, և դժվար թե մեան ելույթները իրենց համար հաճելի լինեն, եթե անգամ զուտ իմիտացիոն բնույթ են կրում» (Իրավունք, 3, 05):

Ինչպե՞ս պետք է լեզուն գործածեն լրագրողներն իրենց մասնագիտության մեջ: Այս հարցի պատասխանները հանձնարարականներ են, որոնք բովանդակում են արժեքավոր դատողություններ և առաջադրում են գործող լրագրողների գործունեության լայն ասպարեզ կամ պարզապես գործելակերպի ազատություն: